Մատթէոս
Եպիսկոպոսապետ
և Կաթողիկոս
ամ. Հայոց։
ռյէ. 1858

ՄԱՏԹԷՈՍ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ. Ամենասիրելի հասարակութեան Հայոց Շուշւոյ Քրիստոսական բազմապատիկ օրհնութեամբ ծանուցանեմք. զի զխնդիր ձեր գրեալ առ մեզ 'ի 28 Մայիսի 'ի մասին հաստատութեան հոգաբարձուաց հոգևոր դպրոցին Շուշւոյ ընտրելոց 'ի ձէնջ ըստ զօրութեան կոնդակի մերոյ տուելոյ ձեզ 'ի 4 Դեկտեմբերի. անցեալ 1859 ամի ընդ համարաւ 284. յաղագս ճոխացուցանելոյ զհոգևոր դպրոցն ձեր ըստ կարգադրութե Ներսիսեան ուսումնարանին. որ 'ի Տփխիս, 'ի 11 ամսոյս ընկալաք ընդ երկուց սիրելի զաւակացն մերոց և հաւատարիմ պատգամաւորաց տեղւոյդ հասարակութե պարոն Բաբայի Բէկլարեանց և պարոն Գէորգայ Ամբրումեանց. ընկալաք զայն և բերկրեցաք 'ի հոգւ գովեցաք զձեր ազգապայծառ հեռատեսութի, գովեցաք զձեր ազգասիրական եռանդն. Մաղթանս այս, աղօթս և խնդրուածս վերախնկեցաք 'ի բարձունս յաթոռ Ածութեան յաղագս հաստատուն և անփոփոխ պահպանելոյ զձեզ յայսմ և 'ի սոյն օրինակ եռանդեան ազգասիրութեան 'ի փառս վերնախնամ տեսչութեան, և յօգուտ ազգիս և հայրենի եկեղեցւոյս Հայաստանեայց։

Ուրախութեամբ ոգւոյ աւասիկ զընտրեալսն 'ի ձէնջ 'ի 24 Յունվարի այսր 1860 ամի 'ի ներկայութեան առաքելոյն 'ի մէնջ այդր Դանիէլ Վարդապետի Շահնազարեանց յառաջնորդական տանն զհինգ անձինս վկայեալս 'ի ձէնջ արժանաւոր հանգամանօք ուսումնասիրութեան և ազգասիրութեան, որք են Աբրահամ Բէկն Մատաթեանց. Համբարձում Աղայն Հախումեանց. պարոն Աբրահամն Խանդամիրեանց. պարոն Սարգիս Մատաթեանց և Նուխաքաղաքացի գերազնիւ Յովաննէս Բէկն Ղուշբէկեանց առանձին կոնդակաւ մեր հաստատեցաք հոգաբարձու հոգևոր դպրոցին Շուշւոյ, յորում ուղղին ուսանել որդիք հոգևորականաց և ժողովրդականաց Թեմին Ղարաբաղու և զհինգ անձինս փոխանորդ նոցա։ Եւ համաձայն խնդրանաց հասարակութեանդ 'ի վերայ արդեն բացեալ բազմատեսակ աղբերաց և հաստատեալ յառաջագոյն 'ի Կոնսիստորիայէն ցուցակաւ յօգուտ հոգևոր դպրոցին Շուշւոյ՝ յաւելաք յայնս և զորբադրամ արդիւնս, և զարդիւնս կրպակաց մոմավաճառութեց բոլոր Թեմի Ղարաբաղու, և տուաք նոցա զիրաւունս արդեն իսկ մշտնջենաւորապէս ընկալնուլ զայնս 'ի տեսչութի իւրեանց։ Հրամանագրեցաք և Կոնսիստորիային Հայոց Ղարաբաղու յանձնել զայնսիկ աղբիւրս արդեանց 'ի ձեռն հոգաբարձուաց, և պարտաւորեցաք զնոյն Ատեանն յամենայն դէպս չարգելուլ զօժանդակութի իւր հոգաբարձուաց հոգևոր դպրոցին, թէ՝ 'ի մասին ժողովման արդեանց և թէ՝ յայլ ինչ յայս վերաբերեալ ձեռնարկս նոցին։

Այսու մերով Վեհափառապետական կոնդակաւ աներկբայ յուսադրեմք զսիրելի հասարակութիդ, թէ՝ ոչ անագան հանդերձեալ եմք առաքել 'ի վիճակն Ղարաբաղու զԹեմակալ Առաջնորդ Եպիսկոպոս. և նա խորհրդակցութբ ընդ հոգաբարձուացն ունի զպակասորդացն հոգալ և մեզ առաջարկել տնօրէնութե, զոր և մեք խոստանամք հաստատել 'ի պայծառութի և 'ի ճոխութի տեղւոյդ հոգևոր դպրոցին։

Ի վերջոյ մաղթելով 'ի տեառնէ զհովանաւորութի երկնառաք շնորհաց և յաւիտենական ողորմութեն Աստուծոյ 'ի վերայ հոգևոր դպրոցին Շուշւոյ հարկադրեմք զամենասիրելի հասարակութիդ չխնայել յոմ դէպս զօժանդակութի ձեր կամաւոր նպաստամատոյց նուէրանաց 'ի հաստատութի և 'ի ճոխութի վերոյիշեալ դպրոցին յաղագս լուսաւորութե հարազատ որդւոցս Գրիգորի Մեծի Նախահայրապետի և մերս Նախամեծար պատրիարքական Մայր աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի։

Ի վերայ բնագրին ստորագրեալ է Մատթէոս Կաթողիկոս ամենայն Հայոց։

Համար 321.
'ի 15 Յունիսի. 1860 ամի.
'ի սբ Էջմիածին։

47196
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
47196

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014892

47196
ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
* ՁԵՌԱԳՐԱՏԱՆ *